

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2013թ. նոյեմբերի 4-5-ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Դեպի սոցիալական պաշտպանության ընդգրկվածություն և ազդեցության վերաբերյալ լավագույն տվյալները. տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալների դերը» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013թ. նոյեմբերի 5-7-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել են ք. Սոֆիայում (Բուլղարիա) կայացած «Էներգետիկայի վիճակագրություն և էներգահաշվեկշիռ» խորագրով ուսումնական այցելությանը,
- ✓ 2013 թ. նոյեմբերի 4-8-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Թափոնների վիճակագրություն» խորագրով սեմինարին, վիճակագիրների և բնապահպանների միասնական աշխատանքի նպատակային խմբի 7-րդ նստաշրջանի և բնապահպանական մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խմբի 14-րդ նստաշրջանի աշխատանքներին,
- ✓ 2013թ. նոյեմբերի 11-15-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետներ Ա. Գյուրջյանը և Հ. Հակոբյանը մասնակցել են ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած «Չափման և ստուգման հավաստագրված մասնագետների ծրագրի» տարածաշրջանային ուսուցողական աշխատաժողովին,
- ✓ 2013թ. նոյեմբերի 10-15-ը ՀՀ ՎՊԽ ամդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը մասնակցել են ք. Հաագայում (Նիդերլանդներ) կայացած «Միգրացիոն տվյալների կառավարման ոլորտում փորձի փոխանակում» խորագրով ուսուցողական այցելությանը,
- ✓ 2013թ. նոյեմբերի 14-15-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Եղիազարյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ջ. Ավոյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «ԱՊՀ երկրների երիտասարդությունը» վիճակագրական ժողովածուի քննարկմանը և կառուցվածքի համաձայնեցմանը,

- ✓ 2013թ. նոյեմբերի 18-22-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության պետ Վ.Գևորգյանը և մարդահամարի վարչության պետի տեղակալ Է.Սանամյանը մասնակցել են ք. Վաշինգտոնում (ԱՄՆ) ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի կողմից կազմակերպված վիճակագրական տեղեկատվության տարածմանը նվիրված հանդիպումներին,



ՀՀ ԱՎԾ նախագահ Ս.Մնացականյանը և ԱՄՆ հաշվառումների բյուրոյի տնօրեն Ջոն Հ.Թոմսոնը

- ✓ 2013թ. դեկտեմբերի 2-4-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Գ.Գևորգյանը և Լ.Պետրոսյանը մասնակցել են ք.ժնևում(Շվեյցարիա) կայացած «Աղքատության չափման հիմնական ուղղությունները» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013թ. դեկտեմբերի 2-6-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը մասնակցել է ք. Տեջոնում (Կորեայի Հանրապետություն) կայացած «Կենսական վիճակագրության արտադրությունը և օգտագործումը. Կենսական տվյալներից դեպի վիճակագրական աղյուսակավորում» խորագրով 2-րդ տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013թ. դեկտեմբերի 4-5-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած Արևելյան տարածաշրջանի ջրի որակի հաշվետվողականության հարցերով տարածաշրջանային ուսումնական սեմինարին,
- ✓ 2013թ. դեկտեմբերի 11-13-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Նորշոպինգում (Շվեդիա) կայացած «Աջակցություն Միգրացիայի պետական ծառայությանը հզորացնելու միգրացիայի կառավարումը Հայաստանում» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում կազմակերպված ուսուցողական այցելությանը,
- ✓ 2013թ. դեկտեմբերի 16-17-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս.Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Գ.Անանյանը մասնակցել են ք.Վիննայում(Ավստրիա) կայացած «ԱՊՀ երկրներում արդյունաբերական վիճակագրության կատարելագործում և արդյունաբերական քաղաքականության վերլուծության համար վիճակագրական ցուցանիշների մշակում» խորագրով բարձրաստիճան սեմինարին: